

բելին տպւած է երես 106-ում, իբրև թէ հեղինակը ասած վիճ՝ «կրօնական անխարժութիւնը բնաւորութեան ովքի կերպարանք ունի, բաց իրօք որքան որ նա փոքրոգութեան նշան է, նոյնքան և սնափառութեան»։ Աստուծուց վախեցէք, պ. Շահը բաղադրական ինչպէս թէ կրօնական անխարժութիւնը փոքրոգութեան և սնափառութեան նշան է։ Գրքի բնագիրը մննք չ'ունինք մեր ձեռքում, բաց մենք այնքան ընտանի ենք զգում մեզ պ. Գարբրիէլի հակեցողութեան աշխարհում, որ գիտենք, թէ ինչ պէտք է ասում մինի հեղինակը. նա երեխ խօսում է այն մարդկանց մասին, որոնց համար իրանց պաշտօնապէս դաւանած կրօնը նշանակութիւն չ'ունի, նրանց համար, որոնք նշանակութիւն չեն տալիս կրօնին և արհամարհում են կրօնը առհասարակ։ Դոքա ան-

տարբեր են. դէպի կրօնը, իսկ այդ վերաբերմունքը կոչում է անտարբերութիւն և ոչ թէ անխարժութիւն, որի լմասուը հալոց լեզուում պ. թարգմանչին շատ և շատ լաւ լաւանի պէտք է լինի.

Ամփոփենք ուրեմն մեր ասածները. Պ. Գարբրիէլի գիրքը մի դաստիարակչական գիրք է, որը ունի թերի կողմեր, բաց որը, իւր ընդհանրութեամբ, գործում է ամենալաւ տպաւորութիւնն Արժէ, որ նա մեզանում տարածվի և կարդացվի թէ բարձր դասատների աշակերտներից և թէ ընթերցանութեան և մտածողութեան սովոր ամեն կարգի անձերից. Թարգմանութիւնը ընդհանրապէս տանելի է, բաց ապագալում պ. թարգմանչին կը հարկաւորւի աւելի լաւ իւրացնել արդի լեզուի ոգին,

Ա.

Dr. Johannes Barchudarian, Inwiefern ist Leibniz in der Psychologie ein Vorgänger Herbarts. Ein Beitrag zur Geschichte der Psychologie. Iena, Frommansche Buchdruckerei (Herrmann Pohle), 1889 թ. (Դօքտօր Յովհաննէս Բարխուդարեան. Ինչ չափով Լայբնիցը Հոգեբանութեան մէջ Հերբարտի նախորդն է։ Մի նպաստ հոգեբանութեան պատմութեան. Ենսա, 1889 թ.):

Աս դիսերտացիան, որ 51 երեսից բաղկացած մի բրոշյւր է, համատարակեց նորերում իրեն գերմանական Ենա-համալսարանի դօքտորական քննութեան արդիւնք։

Նախ քան նորա բովանդակութեան մասին համառօտ տեղեկութիւն տալս, ես կը ցանկավի ի դէպւ

լատինել իմ տեսակէտն ալսպիսի աշխատութիւնների մասին։ Որովհետեւ մննք համալսարանական և այլ բարձր գիտական հիմնարկութիւններ չ'ունինք, ուր հնարաւոր լինէր հալենիքի կեանքն ուսումնասիրել, ուստի և շատ կարևոր էր, որ այն ուսանողները, որոնց վիճակւում է արտասահ-

մանում որ և է ինդրի մշակումով պարապելու՝ մեր անցեալ ու ներկայ կեանքի կամ երկրի երեսովներից ընտրէին ուսումնասիրութեան կամ հետազօտութեան թէման։ Այս ուղղութիւնով մենք թէ հալրենազիտութեանը չատ կը նպաստէինք և թէ եւրոպացոց աւելի կը հետաքրքրէինք թէ մեր ազգով և թէ նորա կեանքից ու երկրից բղխած թէմանով։ Այս տեսակիտից մասնաւրապէս գովելի ևն մեր հալրենակից ուսանողներից մի քանիսների երկասիրութիւնները, որոնց թիւը աճշուշտ աւելի չատ կը լինէր, եթէ, օրինակ՝ գերմանիակում՝ այս գօքտորական քննութեանը լարակից չը լինէին մեծամասնութեան համար չատ զգալի տպագրական և համալսարանական ծախսերը։ Ի հարկէ, եթէ մասնագիտութեան բնաւորութիւնը կամ հալրենիքից հեռու լինելը ուսումնասիրելու ժամանակ չեն թող տալիս հեշտութիւնով հալրենական թէմա ընտրելը՝ այնու ամենանիւ օգտակար է օտար-երկրացիներիս համար կարևոր այս միակ քննութիւնը (գօքտորութիւնը, որ երկուաը բանաւոր առարկաներից, մինը զբաւորից է լինում)։ Այս մի տեսակ համարատութիւնն աւելի կարևոր էր այն մասնագէտներին, որոնց զիատութիւնը վերացական լինելով հեշտութիւնով չի թող տալիս պրօֆէսորներին կամ իրան ուսանողին իւր գիտութեան պաշտը կշռելու։

Վերոյիշեալ ուսումնասիրութիւնը բարձկացած է մի ներածութիւնից և հետեւեալ երկու զրուխներից։ Ի. Բնագանցական (մետաֆիզիկական) հի-

մունք և Ա. Հոգեբանական հիմունք։ Ի նկատի ունենալով, որ այս խընդիրը զուտ մասնագիտական է, ապա ուրեմն և մեր ընթերցողներից մի սահմանափակ շրջանին մասնաւրապէս հետաքրքրելի, ուստի ապաեղ հարկ եմ համարում արած համեմատութիւնների արդիւնքի ամենազիստը կետերը դնել:

I. Բնագանցական հիմունք,  
ա. Համաձայն կէտեր։

1. Ինչպէս Լալբնիցը նոցնպէս և Հերբարան ընդունում են, հակառակ Սպինօզաֆն, ճշգրիտ իրական (րէալ) էութիւնների մի քանակութիւն։

2. Ըստ այս երկու մտածողներին՝ էութիւնը պարզ է։ Ըստ Լալբնիցի՝ նորա համար, որ էութիւնը ասրածական ընդարձակութիւն (räumliche Ausdehnung) չ'ունի։ Իսկ ընդհակառակն ըստ Հերբարափ՝ էութիւնը որպակութիւնով է խիստ պարզ։

3. Երկուան էլ էութիւնը համարում են անբաժանելի։ Ըստ Լալբնիցի՝ տեսակէտին՝ նա բնագանցական էլք է։ Ըստ Հերբարափ՝ խիստ պարզ բանը (strenge Einfachheit) չէ կարող մասերից բաղկացած լինել։

4. Երկուան էլ էութեան մասին այն հասկացողութիւնն ունին, որ նա անեղծ (unzerstörbar) է, որպէսիտե ծագելը և անհետանալը կարող են առաջանալ մասերի միացումից և արոհութիւնից։

5. Նրանք և՛ էութիւնով անփոփոխելի են։ Ըստ Լալբնիցի՝ փոփոխական են միայն նրանց զրութիւնները, իսկ ըստ Հերբարափ՝ ընդհակառակը պէտք էր, որ (այն ժամանակ)

իւրաքանչիւր փոփոխութեան հետ  
ընդհանրապէս որակութեան փոփո-  
խութիւն առաջանար:

6. Բացի սրանից նրանք ոչ  
մի ընդունակութիւն չ'ունին ըն-  
դունակութիւն մի բան ընդունե-  
լու կամ արտադրելու (հին մըտ-  
քով):

7. Ըստ Լալբնիցի և Հերբարտի՝  
կան բացի հասարակ գոլացութիւն-  
ներից (Substanzen) և բաղադրեալ-  
ներ. աճուտեղ մի միտութիւն է միու-  
թեան մէջ, այսուեղ՝ մի բաղմութիւն  
միութեան մէջ:

8. Խնչպէս Լալբնիցը նորնպէս  
և Հերբարտը հոգեբանութիւնը  
դուրս են բերում բնազնցու-  
թիւնից:

բ. Զանազանող կէտեր:

1. Ճշգրիտ իրական (բէալական)՝  
էութիւններին Լալբնիցը մօնադ  
անունն է տալիս, իսկ Հերբարտը  
բէալներ է կոչում նրանց:

2. Մօնադը գործունեակ (thätig)  
լինելու ներքին զօրութիւն ունի և  
այն՝ անընդհատ: Եէալն ընդհակա-  
ռակը հանգիստ էականութիւն (Sein)  
է, ամեն գործունէութիւնից նա հե-  
ռու է (jede Thätigkeit ist von ihm  
ausgeschlossen): Նորա որակութիւնն  
անձանօթ է:

Ուրեմն էութիւնն (Existenz) և  
գործունէութիւնը (Thätigkeit) ըստ  
Լալբնիցի միմնոնն են, իսկ ըստ  
Հերբարտի՝ ոչ:

3. Պատահնելն, (das Geschehen)  
ըստ Լալբնիցի, գոլական (Substan-  
zielles) բան է, իսկ ըստ Հերբարտի՝  
ընդհակառակը երեսիթական (Phäno-  
menales): Անտեղ նա տեղի է ունենում

իւր միջոցով և իւր միջից (aus  
sich selbst), նա բնածին է. ակտուել  
ընդհակառակը նա առաջանում է  
բէալների լարաբերութեան (Verhältniss) միջոցով:

4. Խւրաքանչիւր մօնադն, ըստ  
Լալբնիցի, տիեզերքի ներկալացու-  
ցիչն է, մինչդեռ ըստ Հերբարտի դո-  
րա մասին ամեննեին խօսք էլ չի կա-  
րող լինել:

5. Լալբնիցի մօնադների մէջ աս-  
տիճանական զանազանութիւն կաէ՝  
մերկ մօնադներ, հոգիներ և ոգիներ:

Հերբարտի բէալները զանազան-  
ում ևն միմեանցից ամենախիստ  
հակադրութիւնով (sie stehen im  
scharfsten Gegensatze zu einander)  
և հէնց դորա վերաէ հիմնւում իւրա-  
քանչիւր բէալի ինքնապահպանու-  
թիւնը<sup>1)</sup> (Sichselbsterhalten).

6. Մօնադների շնչքի կատարում  
կանգնած է, ըստ Լալբնիցի, մի կ ենտ-  
րոն ական մօնադ, իսկ ըստ  
Հերբարտի տեսակէտին՝ մի կ ար-  
դադրի չ:

7. Ըստ Լալբնիցի՝ մօնադների մէջ  
դործող ոգերի ենթադրութիւններից  
ծագումէ հոգեբանութիւնը, ալսինքն՝  
մարդկային հոգու երևութների բա-  
ցաւրութիւնը. ըստ Հերբարտի՝ նա  
(հոգեբանութիւնը) առաջանում է  
բէալների լարաբերութեան (Relation)  
և թագրութիւնից:

8. Հոգեբանութիւնը միշտ մնում  
է, ըստ Լալբնիցի, բնազնցութեան  
շրջանի մէջ և երբէք չի կարող  
նրանից ազատուիլ, մինչդեռ ըստ

<sup>1)</sup> Ս.յս ինքնապահպանութիւնն է,  
որ Հերբարտն իւր հոգեբանութեան  
մէջ մտապատճեն է անուանում:

Հերբարտի՝ բնագանցութիւնը ճշգրիս (exakt) հոգեբանութեանն աղատ ճանապարհ է տալիս:

9. Ըստ Լավբնիցի՝ մտապատկերը բնագանցական և ոչ թէ հոգեբանական գաղափար է, մինչդեռ Հերբարտի տեսակէալից՝ այդ արտաքանութիւնը (Ausdruck) սահմանափակ է և միան հոգեբանութեան մէջ է գործադրուում:

Պ. Հոգեբանական հիմունք:

1. Ըստ Լավբնիցի՝ հոգին պարզ բան է, աննիւթական է և չի կարող արտաքուստ ոչ բան ընդունել և ոչ էլ իրանից առաջացնել նորա մէջ կան ներքին գորութիւններ: Հերբարտն ընդունում է հոգու թէ այս պարզութիւնն ու աննիւթականութիւնը և թէ արտաքուստ մի բան ընդունելու և իրանից լարտաքս զղելու անկարելուութիւնը: Բայց նա ժըխտում է նրանց ամեն գործունէութիւնը, մինչդեռ Լավբնիցն ընդունում է նորա մէջ ներքին գործունեալ գորութիւն: Ըստ Լավբնիցի՝ ուրեմն հոգին արտադրում է իւր մտապատկերը իրանից և իւր միջոցով առանց որ և է արտաքին առթի:

2. Ըստ Լավբնիցի՝ հոգին և մարմինը միմեանցից բոլորովին անկախ են: Հերբարտն ընդհակառակն ընդունում է երկուսի մէջ կախման լարաբերութիւն:

3. Ըստ Լավբնիցի՝ զգացողութիւնը (Empfindung) վշողութեան ընդունակ մտապատկեր (erinnerungs-fähige Vorstellung) է, նա բաղադրած է, բայց միաւրական (einheitlich) գորութեան մէջ, մինչդեռ նա, ըստ Հերբարտի, հոգու նախնական

(primitiv) պարզ դրութիւնն է:

4. Ըստ Լավբնիցի՝ մտապատկերները գորութիւններ են (Kräfte): Ըստ Հերբարտի՝ նրանք գորութիւն կը դառնան, երբ նրանց մէջ փոխադրձ ներգործութիւնների կ'ունենալ:

5. Ինչպէս Լավբնիցը, նույնպէս և Հերբարտն ընդունում են, որ հոգին լարատն գործունէութեան մէջ է:

6. Ըստ Լավբնիցի՝ բոլոր մտապատկերները միշտ գիտակից չեն: Հերբարտն այս միտքն ամուր է պահում, բայց նա աւելի մանրամասն խօսում է մտապատկերի դրութեան մասին, որ նա գիտակցութիւն է անուանում: Լավբնիցը գիտակցութիւնն ու ինքնագիտակցութիւնը նույնացուցանում է (identifiziert), մինչդեռ Հերբարտը նրանց մէջ խիստ սահմաններ է գնում:

7. Երկու մտածողներն էլ բացատրում են (ausführen), որ հոգուց ոչինչ չի կորչում: Բայց Հերբարտն աւելի զառաջ է գնում իւր հետազոտութեան մէջ և վերաբաղրութեան մասին ծանրակշուր կանոններ է սահմանում:

8. Մտապատկերների վերադարձը՝ ըստ Լավբնիցի՝ պատահում է համաձան այն տրամադրութիւնների (Dispositionen), որոնք նախկին առպատրութիւններից մնում են մարմնի և հոգու մէջ, մինչդեռ նա (վերադրձը), ըստ Հերբարտի՝ մտապատկերների մթնանալու վերաէ է հիմնում:

9. Ըստ Լավբնիցի՝ վշողութիւնը զգաբարանական տպաւրութիւնների համադրութիւն (Combination) է, վիշեալը վերջինովս է պայմանաւոր-

ւած։ Հերբարտն, ընդհակառակը, փշողութիւնը հիմնում է մրսապատկերների վերարտադրութեան (Reproduction) վերաւ։

10. Լալբնիցը բացատրում է իւրացուցումը (Appreception) ըմբռոնումների (Perception) միաւորութիւնով։ Հերբարտը հետազոտում է ըմբռոնումների միաւորութեան պահմանները։

11. Լալբնիցի զգացողութիւնների թէօրիան (Gefühlstheorie) դեռ անդարդացած է, բայց նա պարունակում է որոշ սաղմեր Հերբարտի վարդապետութեան համար։

12. Լալբնիցը բացատրումէ բաղձարու (Begehren) առաջանալը մի մտապատկերի դէպի միւսը ձգտելով

և սրանով հիմք է գնում բաղձանքի ճիշդ թէօրիակին, մինչդեռ Հերբարտն սկսած շէնքը շարունակում է ու լացնում։

13. Երկու մտածողների համար էլ կամնեալը բաղձալ է, որ միացած է բաղձանքի հասանելիութեան հետ։ (Ուզում է ասել, որ մարդ մի բան կամնում է, երբ նա համոզւած է, որ կարող է արդ նպատակին հասել, եթէ ոչ՝ նա միակն բաղձանք է որ ունի)։

14. Երկուան էլ կիրքը (Leidenschaft) բաղձանքից են գորս բերում։

15. Ներքին ազատութեան խընդրում երկուսն էլ դէտերմինիստ են (Կամքի ոչ անսահման ազատութեան վարդապետող)։

8.-Մ.